Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ «Մասիսի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2)Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են

«Մասիսի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 15^{00}-ին:

«ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջն. դպրոց» ՊՈԱԿ, գ. Մասիս Բ. Մարտիրոսյանի փողոց 1/1

Տեղեկությունների համար դիմել Կոլեգիալ կառավարման խորհրդի նախագահ

Հեռ՝ 093.90.03.27

Էլ.փոստ՝masisvil@schools.am